

Թիւ 26489
Յունիս 26, 1979

Հոգեշնորհ
Տ. Վազգէն Ծ. Վրդ. Քէշիշեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Թեմական Խորհուրդը իր վերջին նիստին մէջ որոշեց իր յաջորդ ժողովը գումարել
Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ՝ Ուրբաթ Յունիս 18, 1979, առաւօտեան
ժամը 11.00ին: Թեմական Խորհուրդը իր նիստը պիտի շարունակէ յաջորդ օրը, Շաբաթ
Յունիս 14, մինչեւ յետ միջօրէի ժամը 8.00:

Համեցէք Ուրբաթ գիշերուան համար պանդոկի կարգադրութիւն ընել Թեմական Խոր-
հուրդի անդամներուն համար. երկու առանձին սենեակներ մէկական անձի համար, եւ
չորս սենեակներ իւրաքանչիւր երկու առանձին անկողինով:

Այս ժողովի ընթացքին Թեմական Խորհուրդը հանդիպում պիտի ունենայ ձեզի եւ
Ժիական Խորհուրդիդ հետ, ինչպէս նաեւ Ս. Խաչ՝ անունով կազմուելիք երկրորդ
համայնքի մը համար նշանակուելիք յանձնախումբին անդամներուն հետ՝ որոնց մասին
ձեզի պիտի տեղեկացնենք:

Պատշաճ կ'ըլլայ եթէ Ուրբաթ երեկոյ ժամը 6.00ին Եկեղեցւոյ սրահին մէջ պարզ
ընթրիք մը կարգադրուի եւ Ժիական Խորհուրդը եւ Թեմական պատգամաւորները տեսակ-
ցութիւն ունենան Թեմական Խորհուրդին հետ: Իսկ ժամը 8.30ին համար համեցէք հրա-
ւիրել Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ բոլոր կազմակերպութեանց վարչութիւնները միաց-
եալ ժողովի մը Թեմական Խորհուրդին հետ: Իսկ երկրորդ համայնքի ներկայացուցիչնե-
րը Շաբաթ առաւօտ ժամը 11.30ին համար հրաւիրեցէք:

Բարի եղէք այս հանդիպումներուն համար յարմար կարգադրութիւնը ընել եւ հա-
ղորդել մեզի:

Թեմական Խորհուրդի անդամներու ժամանումին մասին պիտի տեղեկացնենք ձեզի. իսկ
մեկնումը տեղի պիտի ունենայ Շաբաթ Յունիս 14ին՝ յետ միջօրէի ժամը 8.00էն սկսեալ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ